

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

ՄԱՔԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ

2019-2023 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԳԱՄՅԱ
ԶԱՐԳԱՑՄԱՆ
ԾՐԱԳԻՐ

Կազմել է՝ համայնքի ղեկավար Ռադիկ Ավետիսյան

Հաստատվել է՝ համայնքի ավագանու թիվ 2 նիստի 25.01.2019թ.
թիվ 2 որոշմամբ

Մաքենիս 2019թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսքը

2. Համայնքի իրավիճակի նկարագրություն

2.1 Համայնքի ընդհանուր նկարագրություն

2.2 Համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակը

2.3 Համայնքում իրականացվող ծրագրերը

2.4 Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները

2.5 Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ

2.6 Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների /ՈւԹՀՄ / վերլուծություն

3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում

3.1 Համայնքի զարգացման տեսլական

3.2 Համայնքի զարգացման անմիջական նպատակներ

4. ՀՀԶԾ ֆինանսավորում

5. ՀՀԶԾ մոնիթորինգ

Միւեմա՝ գյուղապետարանի աշխատակազմի կառուցվածքի

Աղյուսակ N 1 - Համայնքի սեփականություն հանդիսացող գույքի ցանկը

Աղյուսակ N 2 - Համայնքի հողային ֆոնդի բաշխումը

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՒՂԵՐՁԸ

Համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական, բնական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջությունն արտահայտող փաստաթուղթ է, որը նախատեսում է ռազմավարական կտրվածքով համայնքի հիմնախնդիրների արդյունավետ լուծումը եւ նպատակային բյուջետավարման գործընթացի իրականացումը:

Համայնքի ներդաշնակ զարգացման, բնակչության սոցիալ-տնտեսական առաջընթացի ապահովման, սոցիալ մշակութային քաղաքականության ներդրման և բարեկեցության մակարդակի բարձրացման նպատակով առաջիկա հինգ տարիներին հնգամյա ծրագիրը հանդիսանալու է ամենօրյա աշխատանքային փաստաթուղթ:

2. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

2.1 Համայնքի ընդհանուր նկարագրություն

Գյուղը տեղակայված է Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիսի քաղաքից 15կմ հարավ արևմուտք Հյուսիսից սահմանակից է Լճական համայնքին, հարավ-արվելքից Ախպրաձոր համայնքին , արևմուտքից Կարճաղբյուր համայնքին

Մարզկենտրոնը Գավառ քաղաքն է, որից համայնքը գտնվում է 80 կմ հեռավորության վրա:

Հանրապետական նշանակության ավտոմայրուղուց գտնվում է 7 կմ հեռավորության վրա: Գյուղում պահպանվել է 9-րդ դարի կառուցված Մաքենյաց վանքը ,10-13 դարերում կառուցված եկեղեցին ,պահպանվում է 10-17 դարերում գերեզմանոց խաչքարերով :

Գյուղը բարձր է ծովի մակարդակից 2200 մ-ով: Բարձրադիրության և լեռնային գոտի լինելու հետևանքով կլիման ձմռանը ցրտաշունչ է, իսկ ամռանը չորային:

Համայնքի բնակչությունը 2019թ. 01 հունվարի

դրությամբ կազմում է 539 մարդ՝ 153 տնտեսություն, որից

- ✓ Կանայք 259
 - ✓ Տղամարդիկ 280
 - ✓ բնակչության տարիքային կազմը (0-6 տարեկան) 7
 - ✓ 7-16 տարեկան 9
 - ✓ 17-18 15
 - ✓ 16-62 տարեկան 312
 - ✓ 63-ից բարձր տարիքի 74
- Կենսաթոշակառուներ
- ✓ միակողմանի ծնողազուրկ երեխաներ 0
 - ✓ հաշմանդամներ 1
 - ✓ աշխատունակներ 296
 - ✓ զբաղվածներ 257

Ժողովրդի իշխանություն իրականացնելու և համայնքային խնդիրները լուծելու նպատակով համայնքներում օրենքով սահմանված կարգով ընտրվում են տեղական ինքնակառավարման մարմիններ՝ համայնքի ղեկավար և համայնքի ավագանի, հինգ տարի ժամկետով: Համայնքի ավագանին ներկայացուցչական մարմին է և իրականացնում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքով և այլ օրենքներով նախատեսված լիազորություններ: Համայնքի ավագանին բաղկացած է 5 անդամից: Ավագանին ընտրվել է 2017թ. նոյեմբերին:

Համայնքի ղեկավարը (համայնքապետը) պաշտոնապես ներկայացնում է համայնքը, համայնքի գործադիր մարմինն է և իրականացնում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված լիազորություններ: Ընտրվել է 21.10. 2018թ-ին

Համայնքի ղեկավարն իր լիազորություններն իրականացնում է համայնքապետարանի աշխատակազմի, համայնքային բյուջետային հիմնարկների, առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների միջոցով:

Համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը բերված է սխեմայում:

Համայնքն ունի սեփականություն, որի իրավունքը պաշտպանված է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքով: Համայնքի սեփականություն կարող են լինել անշարժ և շարժական գույքը, դրամական միջոցները և գույքային այլ իրավունքներ:

Համայնքի սեփականություն հանդիսացող գույքի ցանկը բերված է աղյուսակ N 1-ում:

Համայնքապետարանը գտնվում է համայնքի կենտրոնում 1խ շենք 16 հասցեում: Շենքային պայմանները բավարար են, գույքը նորացված է, համալրված է համակարգչային տեխնիկայով:

Համայնքի տարածքում գործում են 2 պարենային խանութներ,

2.2. Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը

Համայնքի գյուղացիական տնտեսությունները հիմնականում զբաղվում են հողագործությամբ և անասնապահությամբ:

Համայնքի վարչական տարածքը 1686.5 հա է, որից 1586.0 հա գյուղատնտեսական նշանակության հողեր, այդ թվում վարելահողեր՝ 100.5 հա, այլ հողատարածքներ: Համայնքի տնորինության տակ է գտնվում պետական սեփականություն հանդիսացող հողատարածքներ 2318.1 հա, որից գյուղատնտեսական 2298.0 հա, այլ հողատարածքներ 20.1 հա

Արտանիշի գյուղական համայնքի հողային ֆոնդի բաշխումը բերված է աղյուսակ N 2-ում:

2018 թվականի ընթացքում համայնքում գյուղատնտեսական ապրանքներից արտադրվել է հիմնականում կարտոֆիլ, կաղամբ, , աշնանացան ցորեն, գարի, և խոտ: 2019 թվականի հունվարի 1-ի դրությամբ համայնքում հաշվառվել է զրու խոշոր եղջերավոր անասուններ, խոզեր՝ զրուխ, ոչխարներ՝ զրուխ, թռչուններ՝ թև և մեղվաբնտանիք:

Համայնքի բնակելի ֆոնդը կազմում են 165 առանձնատուն: Համայնքի ճանապարհները ասֆալտապատված չեն, որը մեծ դժվարություններ է առաջացնում և խոչնդոտում է համայնքի զարգացման:

Բնության և շրջակա միջավայրի պահպանությունը նորմալ կեսագործունեության ամենաանհրաժեշտ գործոնն է, որի հետևանքով էլ համայնքի առջև ծառայած կարևորագույն խնդիրներից մեկը ազգաբնակչության կենցաղային աղբի տեղափոխման և համայնքի տարածքի մաքրության հարցն է:

Բնակչության կենցաղային աղբի հեռացումը և համայնքի տարածքի աղբահանության կազմակերպման ասպարեզում խնդիրները դեռևս շատ են հաճախակ է կազմակերպվորմ շաբաթորյակներ մաքրվու է փողոցներ և Մաքենյաց եկեղեցու տարածքը:

Մշտապես բնակչության շրջանում աշխատանքներ է տարվում շրջակա միջավայրի մաքրության և պահպանության ապահովման գործում:

Գյուղի բնակելի թաղամասերում դեռևս չկա ջրահեռացման համակարգ, որի պատճառով մարդիկ օգտագործում են տնամերձ հողամասերում կառուցված կոյուղահորերը:

Ներկայիս տրանսպորտային սպասարկումը մասամբ է բավարարում բնակիչների պահանջները: Ցանկալի է համայնքը ապահովել ամենօրյա երթուղով դեպի Վարդենիս, որը կբավարարի բնակիչների, մանավանդ ուսանողների և սեփական տրանսպորտային միջոց չունեցող բնակչության տեղափոխության վիճակը:

Համայնքի բնակչության հեռախոսակապով: Համայնքում գործում են նաև ,ԲիԼայնե, ,ՎիվաՍելե և ,Յու –Քոմ բջջային ցանցերը, ինտերնետ կապից օգտվում են մոդեմ –կապուղու միջոցով:

Բնակչությունը հնարավորություն ունի դիտելու ավելի քան 8 հեռուստատեսություն:

Համայնքն ունի փոստատուն, ամբուլատորիա , որը բարեխճորեն սպասարկում է բնակչությանը:

Համայնքը չունի գիշերային լուսավորության ցանց :Նախատեսվում է հնգամյա ծրագրի ընթացքում որոնել դոնոր կազմակերպություններ, հնարավորության դեպքում օգտվել սոցիալական ներդրումային ծրագրերից և գյուղի գլխավոր փողոցներում իրականացնել նախատեսված ծրագրերը:

Համայնքի տարածքում գործող միակ կրթօջախը միջնակարգ հանրակրթական դպրոցն է, որը մշտապես գտնվում է համայնքի ղեկավարի ուշադրության կենտրոնում: Համայնքապետարանի կողմից իրականացվում են մի շարք ծրագրեր՝ խթանելու կրթության մակարդակի բարելավմանը, օժանդակելու կրթօջախի առջև ծառայած խնդիրների լուծմանը, բարելավելու ինչպես շենքային, այնպես էլ գույքային պայմանները:

2018թ-ին „Գինեշյան հիմնադրամի „ միջոցներով անցկացվեց դպրոցու ջեռուցման համակարգ որով բարելավվեց ուսումնական գործնթացը դպրոցում սովորում են 63 երեխա :

Համայնքը ունի մանկապարտեզի շենք ,բայց մանկապարտեզը չի գործում :

Համայնքում չկան երեխաների արտադպրոցական գեղագիտական դաստիարակությանը, նրանց ունակությունների, կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը նպաստող հիմնարկներ:

Համայնքը ունի մշակույթի տուն, որը գտնվում է անմխիթար վիճակում, որը և չի գործում: Չունի մարզահրապարակներ, որի հետևանքով երիտասարդությունը զրկվում է իր ակտիվ հանգիստը կազմակերպելու հնարավորությունից:

Հանգստի գոտիների և մշակութային հիմնարկների առկայությունը խթան կհանդիսանար համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական, կրթական, ֆիզիկական դաստիարակության զարգացման գործում, սակայն համայնքի բյուջեի միջոցների հաշվին նմանատիպ ծրագրերի իրագործումը անհնար է:

Համայնքի վարչական տարածքում գործող միակ առողջապահական հիմնարկը բուժկետն է, որը սպասարկում է 1 բուժքույր: Բուժկետը ունի համապատասխան գույք և սարքավորում: Համայնքապետարանի կողմից անընդմեջ աջակցություն և վերահսկողություն է իրականացվում, որպեսզի պատշաճ մակարդակով կազմակերպվի համայնքի բնակչության բժշկական սպասարկումը:

Բնակչության, հատկապես մանկահասակ երեխաների բժշկական սպասարկման ապահովման, մատուցվող ծառայությունների որակի բարձրացման նպատակով նախատեսվում է դռնոր կազմակերպությունների հետ մշտական համագործակցել:

2.3. Համայնքում իրականացվող ծրագրերը

- 1/ համայնքում նախատեսվում է վերանորոգել „Վերին առու,, ջրատարը
- 2/ Համայնքի լուսավորության ցանցի անցկացում
- 3/ Կուլտուրայի տան վերանորոգում
- 4/ Մանկապարտեզի բացում
- 5/ Հանդիսությունների սրահի ձեռք բերում և վերանորոգում

Այս ուղղությամբ համայնքապետարանն իր առջև խնդիր է դնում բարեփոխումներ կատարել վերոնշյալ բնագավառն

1. Գալիք հինգ տարիների համար նախատեսվող նպատակային ծրագրերն են.

ԾՐԱԳԻՐ 1. „Վերին առու „ջրատարի վերանորոգում

Ծրագրի նպատակն ու խնդիրները

Ծրագրի նպատակն է ոռոգելի դարձնել շուրջ 85 հա ներառյալ տնամերձերի ոռոգումը, որով կտրուկ կբարձրանա բնակչության եկամտաբերությունը:

Ծրագրի իրագործման համար անհրաժեշտ է լուծել մի շարք կարևոր խնդիրներ.

- 1) կազմակերպել գնումների գործընթաց, կնքել պայմանագրեր շինարարական աշխատանքների կատարման և այդ աշխատանքների իրականացման ընթացքում հսկողության վերաբերյալ.
- 2) ստեղծել նյութա-տեխնիկական բազա.
- 3) ծրագիրն իրականացնել 2019-2023թվականների ընթացքում:

Ծրագրից սպասվող արդյունքները

Կավելանա ցանքատարածքները

կավելանա եկամուտները

Ծրագրի ֆինանսական միջոցների գնահատում

Համայնքը կներդնի 5000.0հազ դրամ

ԾՐԱԳԻՐ 2. ՓՈՂՈՑՆԵՐԻ ԼՈՒՍԱՎՈՐՈՒՄ

Ծրագրի նկարագրությունն ու հիմնավորումը

Համայնքում լուծված չէ փողոցային լուսավորության հարցը:

Մակայն այս աշխատանքները բավարար չեն: Անհրաժեշտ է շարունակել արտաքին լուսավորության համակարգի կառուցման աշխատանքները՝

Ծրագրի նպատակները և խնդիրները

- 1) կազմել ծրագրի իրականացման նախագծա-նախահաշվային փաստաթղթերը.
- 2) կազմակերպել գնումների գործընթացը, կնքել պայմանագրեր շինարարական աշխատանքների կատարման և այդ աշխատանքների իրականացման ընթացքում հսկողության վերաբերյալ.
- 3) ծրագիրն իրականացնել 2019-2023թվականների ընթացքում:

Ծրագրից սպասվող արդյունքները

Իրականացնելով լուսավորման համակարգերի կառուցման ծրագիրը և դրանց սպասարկման աշխատանքները՝ հնգամյա ծրագրի վերջում՝ 2023թվականին, հույս ունենք, որ համայնքը ապահովված կլինի արտաքին լուսավորվածությամբ, և գիշերային ժամերին քաղաքացիների ազատ ու անվտանգ տեղաշարժման հարցում խոչընդոտներ չեն առաջանա:

Ծրագրի ֆինանսական միջոցների գնահատում

Նախնական մոտավոր հաշվարկներով լուսավորության անցկացման աշխատանքների արժեքը կկազմի մոտ 3000.0 հազ դրամ:

ԾՐԱԳԻՐ 3. ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ԿԱՊԻՏԱԼ ՎԵՐԱՆՈՐՈՉՈՒՄ

Ծրագրի նկարագրությունն ու հիմնավորումը

Համայնքն ունի 1 մշակույթի տուն, գտնվում է ոչ բարվոք վիճակում: Որը ունի կապիտալ վերանորոգման կարիք:

Ծրագրի նպատակն ու խնդիրները

Աշխուժացնել համայնքի մշակութային կյանքը: Համայնքի բնակչության համար ստեղծել բարենպաստ պայմաններ մշակութային կյանքի զարգացման համար :

Ծրագրի իրագործման համար անհրաժեշտ է լուծել մի շարք կարևոր խնդիրներ.

- 1) առաջնահերթ իրականացնել ծրագիրը.
- 2) կազմել ծրագրի իրականացման նախագծա - նախահաշվային փաստաթղթերը.
- 3) կազմակերպել գնումների գործընթաց 2019-2023 թվականների ընթացքում:

Ծրագրից սպասվող արդյունքները

Իրականացնելով այս ծրագիրը և շարունակելով կապիտալ վերանորոգման աշխատանքները՝ հնգամյա ծրագրի ընթացքում համայնքը կունենա վերանորոգված մշակույթի տուն և յուրաքանչյուր քաղաքացի հնարավորություն կունենա՝ բավարար կերպով անցկացնելու ազատ ժամանակը:

Ծրագրի ֆինանսական միջոցների գնահատում

Նախնական մոտավոր հաշվարկներով ծրագրի իրականացման համար կպահանջվի մոտ 7.0 /յոթ/միլիոն դրամ, համայնքը պատրաստ է ֆինանսավորելու այդ ծրագրի 10 %-ը՝ բյուջեի հաշվին:

ԾՐԱԳԻՐ 5. ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՐԱՀԻ ՁԵՌՔ ԲԵՐՈՒՄ

Ծրագրի նկարագրությունն ու հիմնավորումը

Համայնքն չունի հանդիսությունների սրահ, Նախատեսվում է ձեռք բերել հանդիսությունների սրահը և կատարել կապիտալ վերանորոգում :

Ծրագրի նպատակն ու խնդիրները

Համայնքի բնակչության համար ստեղծել բարենպաստ պայմաններ բարձր մակարդակով կազմակերպելու հարսանյաց հանդեսներ , տոնակատարություններ, սզո արարողություններ:

Ծրագրի իրագործման համար անհրաժեշտ է լուծել մի շարք կարևոր խնդիրներ.

- 4) առաջնահերթ իրականացնել ծրագիրը.
- 5) կազմել ծրագրի իրականացման նախագծա - նախահաշվային փաստաթղթերը.
- 6) կազմակերպել գնումների գործընթաց 2019-2023թվականների ընթացքում:

Ծրագրից սպասվող արդյունքները

Իրականացնելով այս ծրագիրը և շարունակելով կապիտալ վերանորոգման աշխատանքները` հնգամյա ծրագրի ընթացքում համայնքը կունենա վերանորոգված հանդիսությունների սրահ:

Ծրագրի ֆինանսական միջոցների գնահատում

Նախնական մոտավոր հաշվարկներով ծրագրի իրականացման համար կպահանջվի 4.0 մլն. դրամ:

2.4. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ

ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Համայնքի 2019-2023 թթ

Հ/հ	Մուտքերի անվանումը	2019թ նախատ	2020թ կախատ	2021թ կանխվա	2022թ կախա	20203թ կանխ	
1	Եկամուտներ	14516.7	14816.0	15116.0	15416.0	15716.0	

2.5. Չարգացման խոչընդոտներ և դժվարություններ

1. Հողերի անջրդիության պատճառով գյուղացու եկամուտների նվազում:
2. Բնակչության աշխատատեղերի բացակայություն
3. Ճանապահների ոչ ասվալտապատ լինելը

2.6. Համայնքի ուժեղ կողմերը

- 1) գյուղում բարձրագույն և միջին մասնագիտական կրթությամբ մասնագետների առկայությունը.
- 2) համայնքի ղեկավար-ավագանի-բնակիչներ՝ ամուր կապը և փոխհամաձայնեցումը.
- 3) համայնքի ղեկավարի և ազգաբնակչության վստահությունը:
- 4) գյուղում առկա են բազմաթիվ խաչքարեր , հուշարձաններ, Մաքենյաց վանական համալիր մատուռ, որոնց շնորհիվ կարելի է զարգացնել զբոսաշրջությունը:
- 5) Արտոտավայրերի առկայություն, անասնապահության զարգացման հնարավորություն
- 6) Ջրային պաշարների բավարար առկայություն

Համայնքի թույլ կողմերը

- 1) ճանապարհների անբարեկարգ վիճակը.
- 2) աշխատատեղերի սակավությունը, գործազրկությունը.

- 3) ազգաբնակչության անվճարունակությունը, սոցիալ-տնտեսական պայմանների ցածր մակարդակը.
- 4) մանկապարտեզի, հոգևոր և մշակութային հիմնարկների բացակայությունը, մշակութային տան վերանորոգման անհրաժեշտությունը.
- 5) երիտասարդության աշխատանքային և ժամանցային վայրերի բացակայությունը.
- 6) ջրահեռացման ցանցերի անմխիթար վիճակ
- 7) Փողոցների արտաքին լուսավորության անհրաժեշտությունը:

3. ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՄԱՀՄԱՆՈՒՄ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

1.1 Համայնքի զարգացման տեսլական

Գյուղատեղը որպես բնակավայր ընդգրկում է մոտ **հա** տարածք, անհրաժեշտ է մշակել, հաստատել և գործողության մեջ դնել համայնքի քաղաքաշինական գլխավոր հատակագիծը, համաձայն որի ավելի դյուրին կլինի իրականացնել բնակչության կոմունալ-կենցաղային պայմանների բարելավման աշխատանքները:

Համայնքի տարածքում համարակալվել է բնակավայրի ողջ տարածքը (փողոցներ):

Համայնքի տարածքում անհրաժեշտ է կատարել ինքնակամ, ավարտված և կիսակառույց շինությունների հաշվառում, իրականացնել վերահսկողություն կառուցվող շինությունների նկատմամբ, որպեսզի նրանք համապատասխանեն քաղաքաշինական նորմերին:

Մշակել է բնակավայրի քաղաքաշինական կանոնադրությունը:

Նախատեսվում է իրականացնել ջրամատակարարման համակարգի շահագործման աշխատանքները՝ ընդգրկելով ողջ համայնքի տարածքը:

Ծրագրավորվում է յուրաքանչյուր տարի ավելացնել ոռոգվող հողատարածքների ծավալները

Համայնքում գյուղատնտեսության բնագավառի զարգացումն ապահովելու նպատակով նախատեսվում է իրականացնել հետևյալ խնդիրները.

- 1) աջակցել գյուղացիական տնտեսություններին՝ ոռոգման ջրով ապահովելու գործում.

2) օգնել գյուղացիական տնտեսություններին ձեռք բերելու պարարտանյութեր, թունաքիմիկատներ, վառելիք և սերմեր՝ շուկայականից ցածր գներով:

3) անասնապահության բնագավառում իրականացնել անասունների հաշվառում, պրոֆիլակտիկ բուժում և կազմակերպել հակահամաճարակային միջոցառումներ:

Շրջակա միջավայրի պահպանության բնագավառի զարգացումն ապահովելու նպատակով նախատեսվում է իրականացնել հետևյալ գործառնությունները.

1) ավելացնել փողոցների սանիտարական մաքրման և աղբահանության ծավալները.

2) իրականացնել կանաչապատման աշխատանքներ.

3) աջակցել շրջակա միջավայրի առողջացմանը և սանիտարական մաքրությանը.

Նախատեսվում է շարունակել իրականացնել այս աշխատանքները նաև հաջորդ տարիներին՝ ավելացնելով աղբահանության ծավալները, բնակչության շրջանում աշխատանք տանել շրջակա միջավայրի մաքրության, պահպանության գործում:

Կանաչապատման ուղղությամբ համայնքապետարանը նախատեսում է կազմակերպել ծառատունկ:

Ելնելով բնակչության սպասարկման կուլտուրայի բարձրացման, համայնքի արտաքին տեսքի բարելավման անհրաժեշտությունից՝ անհրաժեշտ է մշտական վերահսկողություն սահմանել համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայություններ մատուցող շենքերի, շինությունների գլխավոր հատակագծին և քաղաքաշինական նորմերին համապատասխան կառուցման, վերանորոգման կամ արտաքին տեսքի փոփոխությունների նկատմամբ: Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների շրջանակում անհրաժեշտ է կանոնակարգել առևտրի և ծառայությունների ոլորտում իրականացվող գործունեությունը, որը նաև կնպաստի սպառողների իրավունքների պաշտպանության ապահովմանը:

Այս ոլորտում հրատապ են հետևյալ խնդիրները.

1) կարգավորել առևտրի, հանրային սննդի և կենցաղ-սպասարկման օբյեկտների տեղաբաշխումը համայնքի տարածքում՝ ուշադրություն դարձնելով նրանց արտաքին տեսքին և համաչափությանը.

2) իրականացնել հսկողություն՝ արտադրանքի վաճառքը կամ իրացումը, ծառայությունների մատուցումը կազմակերպելու միայն համապատասխան

թույլտվության առկայության դեպքում, եթե գործունեությունը պահանջում է թույլտվություն.

3) կատարել պարբերաբար ստուգումներ՝ համայնքի բյուջե տեղական տուրքերի և վճարների մուտքերն ապահովելու նպատակով:

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ

<< 2.Փողոցների լուսավորում _____>>

Պարտադիր խնդիր, որի լուծմանն էմիտված ծրագիրը	1.5կմ երկարության փողոցների լուսավորության անց կացում						
Ծրագրի անմիջական նպատակ	Ցուցանիշներ	Ելակետային արժեք					
		2018	2019	2020	2021	2022	2023
		3000.0		3000.0	3000.0	3000.0	
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք					
		2018	2019	2020	2021	2022	2023
	2.						
Ցուցանիշներ	Ելակետային արժեք						

		2018	2019	2020	2021	2022	2023
				3000.0	3000.0	3000.0	3000.0
Ծրագրի հիմնական Գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1 դոնոր կազմակերպություններ 1.2 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1 2.2						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր` Կապիտալ ծախսեր Ընդհանուր ծախսեր						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	3000.0 հ.դրամ						
Ծրագրի հիմնական ռիսկերը							
Ծրագրի հիմնական շահառուները	Մաքենիս համայնք						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2019-2023թթ						
Ծրագրի համառոտ նկարագրություն	<i>փողոցների լուսավորության անց կացում</i>						

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ

<< 3. Մշակույթի տան կապիտալ նորոգում >>

Պարտադիր խնդիր, որի լուծմանն էմիտված ծրագիրը	<i>Լուսամուտների, դռների փոխարինում նորով, ներքին մակերևույթների հարդարում և ներկում</i>						
Ծրագրի անմիջական նպատակ	Ցուցանիշներ	Ելակետային արժեք					
		2018	2019	2020	2021	2022	2023
		7000.0	7000.0	7000.0	7000.0	7000.0	7000.0
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք					
		2018	2019	2020	2021	2022	2023
		7000.0	7000.0	7000.0	7000.0	7000.0	7000.0
	2.						
Ցուցանիշներ	Ելակետային արժեք						

		2018	2019	2020	2021	2022	2023
Ծրագրի հիմնական Գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1 - դոնոր կազմակերպություններ 1.2 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1 2.2						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր` Կապիտալ ծախսեր Ընդհանուր ծախսեր						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Անհրաժեշտ է 7000.0հ.դրամ						
Ծրագրի հիմնական ռիսկերը							
Ծրագրի հիմնական շահառուները	Մաքենիսի գյուղապետարան						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-2021						
Ծրագրի համառոտ նկարագրություն	<i>տանհրի վերանորոգում</i>						

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ

<< 4 Հանդիսությունների սրահի ձեռք բերում _____ >>

Պարտադիր խնդիր, որի լուծմանն էմիտված ծրագիրը	Հանդիսությունների սրահի ձեռք բերում						
Ծրագրի անմիջական նպատակ	Ցուցանիշներ 10640.0	Ելակետային արժեք					
		2018	2019	2020	2021	2022	2023
		4000.0	4000.0				
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք					
		2018	2019	2020	2021	2022	2023

	10640.0		4000.0	4000.0			
	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք					
		2018	2019	2020	2021	2022	2023
			4000.0	4000.0			
Ծրագրի հիմնական Գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1 համայնքային բյուջե 1.2 -դոնոր կազմակերպություններ 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1 2.2						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ Կապիտալ ծախսեր Ընդհանուր ծախսեր						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	1500.0 հ.դրամ աջակցություն						
Ծրագրի հիմնական ռիսկերը							
Ծրագրի հիմնական շահառուները	Մաքենիս համայնք						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2019-2023						
Ծրագրի համառոտ նկարագրություն	հանդիսությունների սրահի ձևով բերում						

ԵԶՐԱՓՈՒՄ

Համայնքի զարգացման հնգամյա ծրագիրը հիմք է հանդիսանալու համայնքի տարեկան ծրագրերի և բյուջեների մշակման և կատարման աշխատանքները կազմակերպելիս: Ելնելով Արտանիշ համայնքի զարգացման հնգամյա ծրագրի ռազմավարությունից և ընդհանուր նպատակներից՝ շատ կարևոր է սեփական եկամուտների լրացուցիչ աղբյուրներ գտնելը, ֆինանսական միջոցների արդյունավետ հավաքագրման կազմակերպումն ու նպատակային օգտագործումը: 2019-2023թթ. համայնքային բյուջեները պետք է մշակել որպես զարգացման, ծրագրային բյուջեներ, որոնցով հնարավոր կլինի իրականացնել ինչպես ընթացիկ և հիմնական վերանորոգման աշխատանքներ, այնպես էլ սոցիալ-տնտեսական զարգացման տարբեր ծրագրեր:


Իրականացնելով համայնքի զարգացման ներկայացվող հնգամյա ծրագիրը՝ կբարելավվի համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական պայմանները, համայնքը կդառնա մաքուր, բարեկարգ և գրավիչ բնակավայր, կունենա բարելաված ճանապարհային ցանց:


Սոցիալ-տնտեսական առաջընթացին, տեխնեղիաների օր օրի զարգացմանն ու ներդրմանը զուգահեռ անհրաժեշտություն է առաջանում նաև ստեղծելու ինչպես մեր հանրապետության այլ համայնքների, այնպես էլ արտասահմանյան երկրների համայնքների հետ սերտ կապեր: Անհրաժեշտ է համագործակցել առողջության պահպանման, սոցիալական ծրագրերի իրականացման, տարբեր միջոցառումների կազմակերպման, զբոսաշրջության զարգացման ասպարեզներում: Համագործակցությունը մեր երկրի այլ համայնքների, այլ երկրների գյուղական համայնքների հետ հնարավորություն կտա ուսումնասիրելու այլ համայնքների կառավարման, բյուջետավարման գործընթացի կազմակերպման, բնակչության սոցիալ-տնտեսական զարգացման ապահովման, սոցիալական հավասարության պահպանման, առողջության պահպանման ծրագրերի իրագործման, մշակութային, սպորտային և հանգստի միջոցառումների կազմակերպման փորձը, համագործակցելու նշված ասպարեզներում:

Նախատեսվում է 2017-2021 թվականների հնգամյա ծրագրի շրջանակներում ստեղծել այլ համայնքների հետ արտաքին կապեր և համագործակցել վերը նշված ոլորտներում:

Հավելված 1

ՄԵՆՄԱ՝ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ





Ց Ա Ն Կ

ՀԱՄԱՅՆՔԻ ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՄԱՅՈՂ ԳՈՒՅՔԻ

Աղյուսակ 1

Հ/Հ	ՕԲՅԵԿՏԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Չափման միավորը	Քանակը
1	Գյուղապետարան	հատ	1
2	Մշակույթ տուն	հատ	1
3	Ներհամայնքային ճանապարհ / հողից կամ մանրաքարից /	կմ	1.5 կմ
4	Մանկապարտեզ	հատ	1
5	Գերեզմանոց	հա	0.5
6	Ինքնահոս ոռոգման ներհամայնքային համակարգ	հատ	3
7	կաթսայատուն	հատ	1

8	պահեստ	հատ	1
9	բաղնիք շենք	հատ	1
10	ջրամատակարարման ներհամայնքային համակարգ	հատ	1

ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԲԱՇԽՈՒՄԸ

Աղյուսակ 2

Հ/Հ	Համայնքի հողային ֆոնդը և բաշխվածությունն ըստ նպատակային նշանակության	Չափման միավորը	Քանակը
1	Համայնքի վարչական տարածքը համայնքային + պետական	հա	4004.64
2	վարելահողեր	հա	553.12
3	արոտավայրեր	հա	2429.93
4	խոտհարք	հա	207.54
5	գյուղատնտեսական	հա	3883.98
6	բնակավայրերի	հա	84.82
7	Արդյունաբերական և ընդերքօգտագործման	հա	11.94
8	Էներգիկայի, տրանսպորտային կապի կոմունալ	հա	1.12
9	Հատուկ պահպանվող տարածք	հա	10.71
10	ջրային	հա	12.07

ՄԱՔԵՆԻՄ Հ/Ղ Ռ. ԱՎԵՏԻՍՅԱՆ